

պատկանող իմ ժամանակին,- իմ ժամանակիս, որուն իմացական գերագոյն ճիգն էր «Մասիս» շաբաթաթերթը եւ ուր քահանայապետ էին «Մանգումէ»ի խմբագիրները, գերման լրագիրներու քաղաքական իմաստութիւնը թարգմանօրէն հաշտեցնելու չափ մեր շարականներու աշխարհաբար յեղումին: Ուր, Սուլթան Համիտի բարեբաստի՛կ ծննդեան տարեդարձը ու նոյնքան երջանկաբե՛ր գահակալութիւնը փառաբանող ուղերձներ խմբագրելը, մարդասպանութեան աստուածացումը, միամիտներու արկածները, մեր լաւագոյն քերթողներուն գործին մէջ կղկղանք միայն զգալը, փրփուր ու ժանեակ հիւսելով բանաստեղծ պսակուելը ու տակաւին ուրիշ միտք չպահելիք տրտմութիւններ նկարագիր կը ճշդեն: Ամէն ինչ կեղծ էր իմ շուրջը: Ու կեղծ՝ մեր հոգին, որուն արտայայտիչ արուեստն ալ ինկաւ թաթին տակը այդ օրերու ոգիին: Հրաշք է դարձեալ, որ այդ համատարած անկումը մեր յարգանքին արժանի կեցնէ կարգ մը անուններ: Հրակայ, կազմակերպուած այդ կեղծիքը դեղնախտն է մեր հոգիին: Շատ քիչեր զերծ եղան անոր ծծումբէն: Հիմա, այդ շրջանին բրածոյ մարդոց մօտ պզտիկ յաճախանք մը նորէն զգալի կ'ընէ նոյն միազման, ինչպէս ճահիճի մը երեսը ծածկող հողի խաւին վերացումը յարութիւն կու տայ կանանչ գարշութեան: Մեր մատաղութիւնը այս բուրումներով է թունաւորուած: Ու հոս է հմայքը Մաթիկներուն: Երեսուն տարի ետքը, Մաթիկէն տրուած զգայնութիւններ, անկէ յեղուած դէպքերուն խորունկ խռովքը ես չտեսայ յուշերուն մէջը անոնց, որոնք իբր գործիչ մասնակցեր էին շատ մը բաներու: Տեղերու եւ դէմքերու յիշողութեան մէջ ժառանգագուրկ Մաթիկը հոգեվիճակներ, մտայնութիւններ խտացնելու շնորհով կը փոխարինէր իր միակողմանի պատմումը: Անոր տրւածներէն դեռ մտքիս մէջ կը մնայ քանդակուած այդ օրերու հոգեվիճակը մեր ժողովուրդին, զոր խնամքով բաժնեց անիկա երկու հակադիր, «հակամարտ» գոնաներու (գօտի): Սկսած էր Արծրունիով մուտք գտած նո-